ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » հունիս 2025թ. No 3440 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/2579-25 առ 02.06.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հունիսի «06 » - ի N3440 - Ա հրամանի

ՎԵՐԱԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ	Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը
1	Ացետիլսալիցիլաթթու	ացետիլսալիցիլաթթու	դեղահատեր	500մգ; (10) բլիստերում, (10) ստրիպում	Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Կ. Մարքսի փ.124-ա, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, 623856	Ռուսաստան	Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Կիրովի փ.172, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, 623856	Ռուսաստան	ԱԴ	23077 30.05.2025	22.04.2024
2	Օֆտաքվիքս	լևոֆլօքսացին (լևոֆլօքսացինի հեմիհիդրատ)	ակնակաթիլներ	5մգ/մլ; 5մլ պլաստիկե շշիկ-կաթոցիկ	Սանտեն ԲԸ, Կելոպորտինկատու 1, 33100 Տամպերե- բաց թողնման հսկող, Նեքստֆարմա ԲԸ, Նիիտիհաանկատու 20, 33720 Տամպերե, Ֆինլանդիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի հսկող, Մանուֆակչըրինգ Փեքիջինգ Ֆարմակա (ՄՓՖ) Բ.Վ., Նեպտունուս 12, ՀԻՐԵՆՎԻՆ, 8448 ՄՆ, Նիդերլանդներ- երկրորդային փաթեթավորող	Ֆինլանդիա	Սանտեն ԲԸ, Նիիտիհաանկատու 20, 33720 Տամպերե	Ֆինլանդիա	Դ	23078 30.05.2025	06.08.2025

3	Ինտելան	գինկգո բիլոբա, ցենտելա ասիական, հերպեստիս մոնիերա, համեմ ցանովի, ամոմում մախաթանման, էմբլիկա դեղատու	դեղապատիճներ	50մգ+500մգ+125մգ +200մգ+200մգ+400 մգ; (20) պլաստիկե տարայում, (60) պլաստիկե տարայում	Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի	Պակիստան	Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի	Պակիստան	ԱԴ	23079 30.05.2025	30.10.2024